ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ[1] ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

հ/հ	Առաջարկի անվանումը	Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)	Առաջարկի կարգավիճակը • *Ընդունվել է* • *Մերժվել է*	Մերժման դեպքում՝ հիմնավորումը
1.	Համայնքի ենթակառուցվածքների բարելավում՝ Էքսկավատոր տրակտորի ձեռքբերում	Փամբակ համայնքը կազմված է 15 գյուղական բնակավայրերից և բոլորը ունեն հեռագնա արոտավայրեր ու խոտհարքեր: Ճանապարհները բարվոք չեն, տեղ-տեղ անանցանելի: Դրա պատճառով շատերը չեն կարողանում հնձել իրենց խոտհարքերը, կամ հնձելուց հետո խոտը դժվարանում են տեղափոխել: Պարբերաբար հարթեցման և ընթացիկ նորոգման կարիք ունեն բոլոր բնակավայրերի ներհամայնքային ճանապարհները: Գյուղատնտեսությանը զարկ տալու, գյուղատնտեսական հողատարածքների մշակումը ավելի արդյունավետ դարձնելու, ինչու չէ նաև ներհամայնքային ճանապարհների ընթացիկ նորոգման աշխատանքներ իրականացնելու համար ՀՀ, Լոռու մարզ, Փամբակ համայնք, Դեբետ բնակավայր 3 Փ. , 1 տան բնակիչ Վահագն Ղազարյանը առաջարկում է ձեռք բերել էքսկավատոր բազմաֆունկցիոնալ տրակտոր, որը կծառայի Փամբակ համայնքի բոլոր 15 գյուղերին: Ծրագրի ընդհանուր արժեք ըստ նախնական գնահատումների կկազմի 38.000.000 ՀՀ դրամ:	• *Ընդունվել է*	
2.	Գորգագործության /կարպետագործության/ դասընթացների կազմակերպում՝ շարժական ծառայությունների մատուցման միջոցով	Փամբակ համայնքի բնակավայրերի մեծամասնությունում նկատվում էր մշակութային կյանքի պասիվություն: Որոշ բնակավայրերում /Բազում, Ազնվաձոր/ 2024թվականին իրավիճակը բարելավվեց, երբ համայնքի կանայք և երիտասարդ աղջիկները /այդ թվում՝ արցախցիները/ հնարավորություն ունեցան մասնակցելու գորգագործության և կարպետագործության դասընթացներին և տիրապետեցին հայկական հնագույն մշակույթի ճյուղին: Գործում են Pambak-carpet անվամբ գեղեցիկ գորգեր և կարպետներ, մասնակցում են տարբեր փառատոնների, ներկայացնում համայնքը իրենց աշխատանքներով, նաև կարողանում են վաճառել դրանք: Արջուտ բնակավայրում, ինչպես նաև Փամբակ համայնքի մյուս բնակավայրերում նույնպես կան բազմաթիվ կանայք և երիտասարդներ, ովքեր մեծ ցանկություն ունեն ձեռք բերել նոր	• *Ընդունվել է*	

[1] Աղյուսակում լրացվում են Առաջարկների ներկայացման փուլում առցանց և թղթային տարբերակներով ներկայացված բոլոր առաջարկները:

		կարողություններ՝ գորգագործության /կարպետագործության հմտություններ: Նախագծի իրականացման շնորհիվ հնարավորություն կտրվի համայնքի տարբեր բնակավայրերի կանանց և երիտասարդներին /այդ թվում արցախցիներին/ հավաքվել մեկ գաղափարի շուրջ՝ զարկ տալով մշակութային կյանքի զարգացմանը՝ համայնքը դարձնել առավել ճանաչելի և մրցունակ, ինչպես նաև զբաղվածության ապահովումից զատ ստեղծել կանաց համար որոշակի եկամտի աղբյուր: Փամբակ համայնքի ղեկավարի կից ԿԵԽՄ անդամ Արմինե Կարապետյանը առաջարկում է, նախկինում որպես դասընթացի մասնակից, այժմ՝ հմտությունների մեջ խորացած գորգագործի միջոցով տարբեր բնակավայրերում կազմակերպել գորգագործության դասընթացներ՝ ապահովելով մեկ աշխատատեղ և մոտ 45-60 կանանց և երիտասարդների /3 խումբ/ կարողությունների և հմտությունների զարգացում: Ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի 1.200.000 ՀՀ դրամ, որը իր մեջ կներառի դասընթացավարի ծառայության մատուցման, տաքսի ծառայության, թելերի, գորգագործության գործիքների և հենքերի արժեքները:		
3	Ազնվաձորի այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատության խաղահրապարակի հատակի կահավորում ռետինե ծածկով	Փամբակ համայնքի Ազնվաձոր բնակավայրում գործում է այլընտրանքային նախադպրոցական ուսումնական հաստատություն, որտեղ երեխաներին մատուցվում են որակյալ կրթադաստիարակչական ծառայություններ: Սակայն խոսքը չի վերաբերվում ֆիզիկական դաստիարակությանը: Գոյություն ունեցող խաղահրապարակի հատակը ամբողջությամբ պատված է խճաքարերով, ինչը անհարմարավետ և անվտանգ է երեխաների համար: Խնդիրը կարելի է լուծել, եթե խաղահրապարակի հատակը կահավորվի ժամանակակից, ինչպես նաև առողջության տեսանկյունից անվտանգ ռետինե ծածկով: ՀՀ, Լոռու մարզի, Փամբակ համայնք, Ազնվաձոր բնակավայր 1 Փ, 1 նրբ. 1 տան բնակչուհի Մոնիկա Եղիկյանը ներկայացնում է, որ արդյունքում կունենանք ժամանակակից ստանդարտներին համապատասխանող խաղահրապարակ, երեխաները խաղահրապարակում կդրսևորեն ֆիզիկական ակտիվություն: Ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի մոտ 1.700.000 ՀՀ դրամ: Աշխատանքները կներառեն մոտ 60 քմ խաղահրապարակի բետոնապատման, ռետինե ծածկի փռման, առկա ցանկապատի ամրացման աշխատանքներ:	• *Ընդունվել է*	
4	Մարգահովիտի մանկապարտեզի համար թվով 30 մահճակալի / 15	Մարգահովիտ գյուղի մանկապարտեզում, կրթություն են ստանում 60 սան: Մեկ խմբի /30 երեխա/ առկա մահճակալներն ու 60 աթոռները մաշված և վնասված են, կահույքի անբավարար վիճակը բարձրացնում	• *Ընդունվել է*	

	հատ երկհարկանի/ և թվով 60 աթոռի ձեռք բերում	է մարմնական վնասվածքների ռիսկը երեխաների համար: Ըստ Մարգահովիտի երիտասարդական կենտրոն,, ՀԿ-ի նախագահ Էմիլիա Մարտիրոսյանի, նոր կահույքի ձեռքբերումը կստեղծի անվտանգ պայմաններ, կանխելով հնարավոր վնասվածքները և ապահովելով երեխաների բարեկեցությունը: Երեխաները կունենան ավելի լավ պայմաններ հանգստի և դասերի ընթացքում, ինչը կարևոր է նրանց առողջ զարգացման, որակյալ կրթության և ֆիզիկական անվտանգության համար: Ծրագրի արժեքը կկազմի 2.000.000 ՀՀ դրամ, կգնվի 15 երկհարկանի մահճակալ և 60 հատ աթոռ:		
5	Մարգահովիտ բնակավայրի 3-րդ փողոցում կոյուղու /մոտ 1 կմ/ կառուցում	Մարգահովիտ բնակավայրի 3-րդ փողոցի մի զգալի հատվածում կոյուղատարի բացակայության պատճառով կոյուղաջրերը հոսում են փողոցով: Սա լուրջ սպառնալիք է բնակիչների առողջության, շրջակա միջավայրի և կյանքի որակի համար: Կեղտաջրերի ազատ հոսքը ստեղծում է **հակասանիտարական պայմաններ**, նպաստում հիվանդությունների տարածմանը և վատթարացնում համայնքի ընդհանուր տեսքը: Կեղտաջրերի առկայությունը հատկապես ձմռանը ստեղծում է ֆիզիկական վտանգ միջավայր՝ սայթաքման, ընկնելու և վնասվածքներ ստանալու տեսքով, հատկապես երեխաների համար: Ըստ Մարգահովիտի երիտասարդական կենտրոն,, ՀԿ-ի նախագահ Էմիլիա Մարտիրոսյանի, կոյուղատար համակարգի ներդրումը կհիմնվի երկարաժամկետ լուծման վրա, ինչը կարևոր քայլ կլինի համայնքի ենթակառուցվածքային զարգացման համար: Կեղտաջրերի ճիշտ հեռացումը կկանխի հողի և ջրային ռեսուրսների աղտոտումը, նպաստելով էկոլոգիական կայունությանը: Փողոցում բաց կոյուղաջրերի բացակայությունը կնպաստի մաքուր ու հիգիենիկ միջավայրի ստեղծմանը: Կեղտաջրերի հոսքի դադարեցումը կնվազեցնի վարակիչ հիվանդությունների տարածման վտանգը, ապահովելով բնակիչների անվտանգությունն ու բարեկեցությունը: Ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի 22.000.000 ՀՀ դրամ՝ ներառելով մոտ 1000 գծամետր կոյուղու կառուցում:	• *Ընդունվել է*	